ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2019թ.
11.06. N 1925-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019Թ ՄԱՅԻՍԻ 30-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂԻ

1. Հաղթողի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, /իրավաբանական անձի անվանումը/, հասցեն
<<ԷՅ ՍԻ Ի ԳՐՈՒՊ>> ՍՊԸ, գրանցման համար 271.110.1033138, տնօրեն Արթուր Շիրմազանյան։

1) Հաղթողը մրցույթի արդյունքներով ընդունել է հետևյալ պարտավորությունները:

ա/ վարձակալությամբ տրամադրվող տարածքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N896 որոշմամբ հաստատված կարգի համապատասխան տեղադրել ոչ հիմնական շինություններ։

բ/ վարձակալության իրավունքի տարեկան վճարը մեկնարկային 4 800 000 դրամի փոխարեն վճարել 5 000 000 դրամ:

գ/ անհրաժեշտության դեպքում իրականացնել տարածքով անցնող ստորգետնյա և վերգետնյա այլ հաղորդակցուղիների տեղափոխման աշխատանքները:

դ/ տարածքի բարեկարգումն իրականացնել նախապես համաձայնեցված էքիզային նախագծի համաձայն:

2) Ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում սույն հավելվածը ենթակա է վերանայման՝ չեղյալ համարելու առումով:

3) Սույն հավելվածի 1) կետի ա/, գ/ և դ/ ենթակետերի հսկողությունը դնել Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության, 1) կետի բ/ ենթակետի հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության վրա:

2. Հաղթողը մուծել է Երևանի քաղաքապետարանի գանձապետական հ.1 բաժանմունքում գտնվող
ա/ 900015211403 հ/հ՝ տեղական վճար - 10.0 հազ.դրամ, Իդրամ, անդ հ.004520, տրված 16.05.2019թ.
բ/ 9000251100125 հ/հ՝ նախավճար – 240 000 դրամ, Իդրամ, անդ հ.0045219, տրված 16.05.2019թ.

3.Վարձակալվող հողամասի հասցեն, մակերեսը, ծածկագիրը, ժամկետը -

Երևան, Արշակունյաց պողոտա հ. 28/27, 2165.15 քմ, Վ2019-01, 3 տարի,

ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածքը ներառված է նախագծային ճանապարհի համար առանձնացված հողամասի սահմաններում, դրա շինարարական աշխատանքները

սկսվելու հետ պայմանավորված, վարձակալության պայմանագիրը վարձատուի կողմից ենթակա է միակողմանի դադարեցման:

4. Հողամասի օգտագործման նպատակը - ընդհանուր օգտագործման տարածքները դրանց նշանակությանը համապատասխան շահագործելու, տարածքի բարեկարգման և 35-50 մ բարձրության վրա ռեստորանի կազմակերպման (տեղադրման) համար:

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի քարտուղար Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ